ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Տաթև» գիտակրթական համալիր վերապատրաստող կազմակերպություն

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴԵՐԸ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԿՐԹՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՈՐԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Երևանի հ.50 և Ռաֆֆու անվան հ.36 հիմնական դպրոցների դասվարներ՝

Քնարիկ Վարոսյան

Շողիկ Աբրահամյան

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն _____ 3

Սովորողների ինքնուրույն աշխատանքը, նրա նշանները և կազմակերպման պայմանները __ 5

Ինքնուրույն աշխատանքների դասակարգումը _____ 9

Ինքնուրույն աշխատանքների նշանակությունը կրտսեր դպրոցականների ուսուցման գործում _____14

Եզրակացություն _____ 18

Օգտագործված գրականություն _____ 20

Ներածություն

Արդի կրթական համակարգում ընդհանրապես, տարրական դասարաններում մասնավորապես բացառիկ տեղ է հատկացվում սովորողների՝ ինքնուրույնություն և ստեղծագործական մոտեցում ցուցաբերելու կարողությունների ձևավորմանը: Ժամանակակից կրթական համակարգի նպատակներից մեկն է երեխային տալ այնպիսի կրթություն, որը նրան հնարավորություն կտա ոչ միայն գիտելիքներ ձեռք բերել, այլ զարգացնել կարողություններն ու հմտությունները՝ դրանք կիրառելով գործնականում: Կրթություն, որի արդյունքում նա կսովորի ազատ, անկաշկանդ, ինքնուրույն մտածել և գործել: Ուստի մերօրյա մանկավարժի գործունեությունը չպետք է սահմանափակի սովորողի ստեղծագործական որոնումների շրջանակը: Ընդհակառակը, ուսուցման գործընթացն աշակերտին պետք է ինքնադրսևորման և ինքնազարգացման հնարավորություն ընձեռի: Դա իրականացվում է սովորողների կողմից նորը փորձարկելու, բացահայտումների, ուսումնառության ընթացքում ինքնուրույն գործունեություն ծավալելու միջոցով: Ուսուցիչը, ուղղորդելով, աջակցելով, սատարելով հանդերձ, պետք է աշակերտին աննկատ ու անձայն հուշի. «Փորձի՛ր ինքնուրույն հարթել արդյունքի հասնելու քո ճանապարհը»:

Այս խնդրի լուծմամբ պետք է զբաղվել արդեն կրտսեր դպրոցում, քանի որ հենց այդ փուլում են երեխայի մոտ ձևավորվում կրթական գործունեության հիմքերը, ինքնաարտահայտման ցանկությունն ու ընդունակությունը: Գոյություն ունեն բազմաթիվ մանկավարժական մեթոդներ և ուսումնական գործունեության կազմակերպման եղանակներ, որոնք միտված են այդ խնդրի լուծմանը:

Ուսումնադաստիարակչական գործընթացը բազմաթիվ հետազոտողների ուշադրության կենտրոնում է եղել:

Հետազոտման նպատակն է տեսականորեն ուսումնասիրել կրտսեր դպրոցականների ինքնուրույն աշխատանքները, դրանք պլանավորել և կիրառել գործնականում, որը կապացուցի սույն գործունեության դրական ազդեցությունը:

Մեր հետազոտման առարկան կրտսեր դպրոցականների բանավոր և գրավոր խոսքի զարգացման գործընթացն է՝ ինքնուրույն ստեղծագործական աշխատանքների միջոցով,

պայմանավորված թեմայի շուրջ տարվող աշխատանքով և այդ ամենի նկատմամբ ունեցած հետաքրքրությամբ:

Մեր աշխատանքային հետազոտության վարկածը ենթադրում է, որ ինքնուրույն ստեղծագործական աշխատանքների միջոցով կրտսեր դպրոցականների բանավոր և գրավոր խոսքի զարգացումը կնպաստի երեխաների ուսուցման ավելի արդյունավետ գործընթացին անհրաժեշտ մի քանի պայմաններով.

- կրթական գործընթացում ստեղծագործական աշխատանքների ու հնարների պարբերաբար կիրառում,
- կրտսեր դպրոցահասակ երեխաների տարիքա-հոգեբանական առանձնահատկությունների նկատառում,
- երեխայի ներդաշնակ զարգացման համար անհրաժեշտ հոգեբանա-մանկավարժական պայմանների առկայություն,

Հետազոտության արդիականությունը և տեսական նշանակությունը պայմանավորված են կրտսեր դպրոցի մայրենիի դասերի առջև դրված զարգացնող խնդիրներով, ինքնուրույն-ստեղծագործ գիտելիքների վերաբերյալ դպրոցականներին նախնական գիտելիքներ հաղորդելու և այդ գիտելիքների ճանաչման ու տարբերակման կարողություններ զարգացնելու վերաբերյալ ՀՀ նոր կրթակարգում առաջադրված օրախնդիր պահանջներով: Առանց այս պահանջների՝ իրականացվող թեման չէր ունենա արդիական նշանակություն:

Կիրառելով սովորողների ինքնուրույն գործունեությունը կազմակերպելու զանազան մեթոդներ և հնարներ՝ չպետք է մոռանալ, որ աշակերտին հարկավոր է նախապատրաստել համապատասխան գործունեության կատարմանը: Հակառակ դեպքում նրա աշխատանքում արդյունավետություն արձանագրել հնարավոր չէ:

Սովորողների ինքնուրույն գործունեության հմտորեն կազմակերպումը կօգնի նրանց յուրացնելու առարկայական անհրաժեշտ գիտելիքներ, տիրապետելու համապիտանի ուսումնական կարողություններին և պատրաստ լինելու ստեղծագործական ակտիվ ուսումնառության:

Այս ամենը կարելի է ամփոփել մեկ կոչով. «Նպաստել անձի զարգացմանը»: Իսկ դա հասարակության պատվերն է:

Սովորողների ինքնուրույն աշխատանքը, նրա նշանները և կազմակերպման պայմանները

Ցանկացած գիտություն իր առջև խնդիր է դնում ոչ միայն նկարագրել և բացատրել այս կամ այն երևույթներն ու առարկաները, այլ ելնելով մարդու շահերից՝ դրանք կառավարել ու փոփոխել:Կառավարել և առավել ևս փոփոխել երևույթները կարելի է միայն այն դեպքում, երբ դրանք բավարար չափով նկարագրված և բացատրված են: Գիտության մեջ այդ ֆունկցիան կատարում են դրույթները, որոնց շարքին են դասվում երևույթների փոփոխման սկզբունքներն ու կանոնները:Այսպիսով, դիտելով առարկան կամ երևույթը, մենք նախ պետք է ծանոթանանք տվյալ երևույթին, այն ուսումնասիրենք ամբողջովին: Պետք է ի հայտ բերել երևույթների կամ առարկաների ֆունկցիոնալ փոխկապակցվածությունը, ձևակերպել դրանց գոյության օրենքը, նշել կառավարման ձևերը և նկարագրել, թե ինչպիսի գործողությունների միջոցով կարելի է փոփոխել այդ երևույթներն ու առարկաները:

Ինքնուրույն աշխատանքը պարապմունքների կազմակերպման ձև չէ և ոչ էլ ուսուցման մեթոդ: Այն ավելի ճիշտ է դիտարկել որպես սովորողներին ինքնուրույն գործունեության մեջ ներգրավելու աշխատանքի տրամաբանական և հոգեբանական կազմակերպման միջոց:

Հասարակության պահանջը դպրոցից այնպիսի անհատի ձևավորումն է, ով կկարողանա ինքնուրույնաբար, ստեղծագործաբար մոտենալ գիտական, արտադրական, հասարակական խնդիրներին, մտածել քննադատաբար, մշակել և պաշտպանել իր տեսակետը, սկզբունքը, պարբերաբար նորացնել գիտելիքներն ինքնակրթությամբ, կատարելագործել հմտություններն ու կարողությունները՝ դրանք կիրառելով գործնականում:

Այս ոլորտի մասնագետներն ընդգծում են, որ կարևորը սովորողներին անհրաժեշտ գիտելիքներ տալն է, նրանց զինել մտավոր աշխատանքի գիտական կազմակերպման կարողություններով, հնարներով ու հմտություններով, այն է՝ կարողանալ առաջադրել նպատակ, ընտրել դրան հասնելու միջոցներ և աշխատանքը կատարել ծրագրավորված ժամանակահատվածում: Ամբողջական և ներդաշնակ անհատ ձևավորելու համար

անհրաժեշտ է նրան պարբերաբար ներգրավել ինքնուրույն գործունեության մեջ, որը ուսումնական հանձնարարությունների յուրահատուկ գործընթացում ձեռք է բերում ինքնուրույն որոնողական աշխատանքի գործունեության բնույթ:

Սովորողների ակտիվության և ինքնուրույնության բնույթի վերաբերյալ հետազոտություններում տեղ են գտել բազմաթիվ տարբեր ուղղություններ: Առաջին ուղղությունը սկիզբ է առնում հինավուրց ժամանակներից: Դրա ներկայացուցիչներ կարելի է համարել հին հունական մտածողներին (Արիստոտել, Սոկրատես, Պլատոն), ովքեր խորապես և բազմակողմանիորեն հիմնավորել են երեխայի կամավոր, ակտիվ և ինքնուրույնաբար գիտելիք ձեռք բերելու կարևորությունը: Նրանց դատողությունները բխում են այն թեզից, որ մարդու մտածողության զարգացումը կարող է հաջող ընթանալ միայն ինքնուրույն գործունեության արդյունքում, իսկ անձի կատարելագործումն ու նրա ընդունակությունների զարգացումը՝ ինքնաճանաչման ճանապարհով (Սոկրատես): Նման գործունեությունը երեխային հրճվանք ու բավարարվածություն է պարգևում, և դրանով իսկ բացառում նրա պասիվությունը նոր գիտելիքներ ձեռք բերելու ճանապարհին:

Վերոհիշյալ ուղղություններն իրենց հետագա զարգացումն են ստանում Ֆրանսուա Ռամբլեի, Միշել Մոնտենի, Թոմաս Մորի արտահայտած մտքերում, ովքեր միջնադարյան մռայլ իրականության մեջ, երբ դպրոցներում անարգել ծաղկում էր ապրում դոգմատիզմն ու սերտողականությունը, պահանջում են երեխային սովորեցնել ինքնուրույնություն, նրա մեջ դաստիարակել քննադատորեն մտածող մարդու: Նույնանման մտքեր են արծարծվում Յ.Ա. Կամենսկու, Ժ.Ժ. Ռուսոյի, Ի.Գ. Պեստալոցցիի, Կ.Դ.Ուշինսկու և այլոց մանկավարժական աշխատությունների էջերում:

Ուսումնասիրելով ինքնուրույն աշխատանքի էությունը տեսականորեն առանձնացնում ենք այդ գործընթացի զարգացման երեք ուղղություններ՝ ճանաչողական, գործնական և տեխնիկական-կազմակերպչական:

20-րդ դարի 60-ական թթ. Բ.Պ.Եսիպովը հիմնավորեց ուսուցման գործընթացում ինքնուրույն աշխատանքի դերը, տեղը և խնդիրները:

Աշակերտների գիտելիքների և կարողությունների ձևավորման գործում ուսուցման բանավոր, կարծրատիպային միջոցները դառնում են քիչ արդյունավետ:

Ինքնուրույն աշխատանքի դերը կարևորվում է նաև ուսուցման համակարգչայնացման համատեքստում՝ ուղղորդվելով դեպի ստեղծագործ աշխատանք և հմտությունների ձևավորում:

Երկրորդ ուղղությունն իր սկիզբն է առնում Յ.Ա.Կոմենսկու աշխատություններում: Այն բովանդակում է դպրոցականներին ինքնուրույն աշխատանքային գործունեության մեջ ներգրավելու համար անհրաժեշտ գործնական կազմակերպչական հարցերի մշակում: Ընդ որում խնդրի առարկան այստեղ աշակերտի գործունեության բնույթը ոչ բավարար խորությամբ ուսումնասիրած և վերլուծած ուսուցչի գործունեությունն է: Դիդակտիկ ուղղության շրջանակներում վերլուծվում են ինքնուրույն աշխատանքների կիրառման ոլորտները, ուսումնասիրվում են նրանց տեսակները, անշեղորեն կատարելագործվում է նրանց օգտագործման մեթոդիկան ուսումնական գործընթացի տարբեր օղակներում: Մեթոդական ասպեկտում զգալիորեն լուծվում և կայանում է մանկավարժական ղեկավարության և դպրոցականի ինքնուրույնության փոխկապակցության խնդիրը: Ուսուցման պրակտիկան նաև հարստացել է ընդգրկուն նյութերով, որոնք նպաստում են տանը և դպրոցում աշակերտի ինքնուրույն աշխատանքի ճիշտ կազմակերպմանը:

Երրորդ ուղղությունը բնորոշվում է նրանով, որ ինքնուրույն գործունեությունը ընտրվում է իբրև ուսումնասիրման առարկա: Այս ուղղությունը սկիզբ է առնում հիմնականում Կ.Դ.Ուշինսկու աշխատություններում: Հետազոտությունները, որոնք զարգանում էին հոգեբանա-մանկավարժական ուղղության ենթատեքստում,կոչված էին բացահայտելու ինքնուրույն գործունեության էությունն իբրև դիդակտիկ կատեգորիա՝ իր մեջ ներառելով առարկա և գործունեության նպատակ: Սակայն այս նվաճումներով հանդերձ՝ սույն ուղղության հետազոտման մեջ բավարար չափով չեն բացահայտված դրա գործընթացն ու կառուցվածքը: Այնուհանդերձ, գոյություն ունեն ինքնուրույն գործունեության նշանակության, տեղի և դերի որոշ կառուցվածքային վերլուծության դրույթներ: Կան երկու խմբեր՝ նման, բայց միևնույն ժամանակ յուրահատուկ: Հենց դրանց գործունեության մեջ էլ բնորոշվում է ինքնուրույնության էությունը:

<u>1-ին խումբ</u>

1. Բովանդակության բաղկացուցիչ գիտելիքներ՝ արտահայտված հասկացություններում, պատկերներում ընկալումներում և պատկերացումներում:

2. Բաղկացուցիչ գործողությունների բազմակողմանիություն, հմտությունների և հնարների կիրառում, ինչպես արտաքին, այնպես էլ ներքին ասպեկտներում:
3. Բաղկացուցիչ արդյունավետ նոր գիտելիքներ, միջոցներ, սոցիալական փորձ, գաղափարներ, ընդունակություններ, որակներ:

<u>2-րդ խումբ</u>

1. Բովանդակության բաղկացուցիչ խնդրի ուսումնասիրման ընդգծում, ուսուցողական գործունեության նպատակների հստակեցում:
2. Գործընթացային բաղկացուցիչ արդյունքի հասնելու համար գործողությունների նպատակահարմար ընտրություն և կիրառում:
3. Դրդապատճառ հանդիսացող նոր գիտելիքների պահանջ, որը կատարում է ինքնագիտակցված գործունեության ֆունկցիա:

Ըստ էության ինքնուրույն գործունեության գործընթացը ներկայանում է եռյակի տեսքով. *դրդապատճառ կամ շարժառիթ - գործողություն - արդյունք:*

Այսպիսով, ինքնուրույն գործունեությունը կարող է դիտարկվել ամենալայն առումով՝ շրջապատող աշխարհի հանդեպ անհատի ցանկացած վերաբերունքով, միջավայրի հետ նրա կոնկրետ համագործակցությամբ:

Ինքնուրույն աշխատանքների դասակարգում

Ելնելով կատարման վայրից՝ ինքնուրույն աշխատանքը դասակարգվում է հետևյալ կերպ.

- դասարանում (լաբորատորիայում, արհեստանոցում, դպրոցի տարածքում գտնվող այլ վայրում)

- արտադասարանական կամ արտադպրոցական ուսումնական միջոցառման ժամանակ (դպրոցին կից փորձարարական հարթակում, էքսկուրսիայի ընթացքում և այլն)

- տանը

Մեթոդիստները հատկապես գերադասում են գիտելիքների աղբյուրների վրա հիմնված ինքնուրույն աշխատանքի դասակարգման տեսակները: Դրանցից են. աշխատանք դասագրքով, թերթով, լրացուցիչ գրականությամբ, նկարազարդումներով և այլն: Նման դասակարգում առավել կատարյալ տեսքով մշակվել է Վ.Պ.Ստրեզիկոզինի կողմից: Նա առանձնացնում է աշակերտների ինքնուրույն ուսուցողական աշխատանքի հետևյալ տեսակները.

1. Աշխատանք դասագրքով.
   - առանձին գլուխների ծրագրի կազմում,
   - ուսուցչի հարցերի պատասխանում,
   - ստեղծագործության գաղափարական բովանդակության կամ գեղարվեստական յուրահատկությունների վերլուծություն՝ ելնելով ուսուցչի հարցադրումներից,
   - գործող անձերի բնութագրում և այլն:
2. Աշխատանք տեղեկատվական գրականության հետ.
   - վիճակագրական ժողովածուներ,
   - բառարաններ,
   - հանրագիտարաններ և այլն:
3. Ուսուցողական վարժություններ
4. Շարադրություններ և նկարագրություններ.
   - հենակետային բառերով,
   - նկարներով,

- անձնական տպավորություններով և այլն:

5. Բաժանվող նյութի օգտագործման հետ կապված աշխատանք.

- նկարների փաթեթ և այլն:

6. Գրաֆիկական-գծագրական աշխատանքներ:

Պետք է նկատի ունենալ, որ գիտելիքների աղբյուրների վրա հիմնված ինքնուրույն աշխատանքների դասակարգումն ինքնանպատակ չէ:

Նման դասակարգումը որոշակի արժեք ունի, քանի որ մատնանշում է ուսումնառուների կրթական գործունեության մեջ ինքնուրույն աշխատանքի ներառման միջոցների բազմատեսակությունը:

Սակայն դասակարգման նման մոտեցումը միակողմանի է: Այն չի բացահայտում աշխատանքի ներքին բովանդակությունը՝ ստվերում թողնելով աշակերտի մտավոր ակտիվության մակարդակը: Դա գիտակցում էին բազմաթիվ առաջավոր տեսաբաններ և փորձում ինչ-որ կերպ համատեղել ինքնուրույն աշխատանքի բովանդակության երկու կողմերը: Այս առումով առավել հատկանշական է Բ.Պ.Եսիպովի կողմից մշակված դասակարգումը: Իբրև ելակետային սկզբունք է դրված դիդակտիկ նշանակությունը, ըստ որի ինքնուրույն աշխատանքի տեսակներն առանձնանում են ուսումնական գործընթացի հիմնական օղակներով: Եսիպովը փորձել է ներկայացնել այդ տեսակներից յուրաքանչյուրում առկա դժվարությունները և աշակերտների մտավոր գործունեության դինամիկան:

Բազմաթիվ հետազոտողներ, ինքնուրույն աշխատանքի բովանդակության ներքին կողմի լավագույն լուսաբանման որոնումներից ելնելով, իրենց ուշադրությունը կենտրոնացրին արդյունավետ և ստեղծագործ աշխատանքի աճի վրա՝ ինչպես ինքնուրույն գործունեության մեջ, այնպես էլ տրված առաջադրանքներում, որոնք արտացոլում էին այդ գործունեությունը և ցուցադրում աշակերտների մտածողության մակարդակի փոփոխությունները: Այս հայեցակարգը բազմաթիվ հետևորդներ ունեցավ և՛ մանկավարժ տեսաբանների մոտ, և՛ գործնականում: Ուսուցման գործընթացը պահանջում է աշակերտների մշտապես աճող ինքնուրույնություն և ստեղծագործ միտք: Այս հիմունքներով ինքնուրույն աշխատանքի դասակարգման առաջին փորձը գուցե պատկանում է Մ.Ի.Մորոյին (1963թ.), որտեղ առանձնանում են հետևյալ սկզբունքները.

ա)գլխավորապես աշակերտների կողմից ուսուցչի գործողությունների և դատողությունների նմանակման վրա հիմնված

բ)աշակերտների կողմից ուսուցչի ղեկավարությամբ նախապես ձեռք բերած գիտելիքների և ունակությունների ինքնուրույնաբար կիրառման պահանջի վրա հիմնված

գ) ստեղծագործ աշխատանքների վրա հիմնված, որոնք պահանջում են սովորողից հարցադրման և հարցի լուծման ուղիների ընտրության ինքնուրույնություն, անհրաժեշտ դիտարկումների ինքնուրույն անցկացում և եզրահանգումներ կատարելու ինքնուրույն մոտեցում:

Սովորողների ինքնուրույն գործունեության մակարդակին համապատասխան՝ Պ.Ի.Պիդկասիստրին առանձնացնում է ինքնուրույն աշխատանքի 4 տիպ.

- ըստ օրինակի
- վերակառուցողական
- տարբերակվող-փոփոխական
- ստեղծագործական

Սրանցից յուրաքանչյուրն ունի իր դիդակտիկ նպատակը:

Ըստ օրինակի ինքնուրույն աշխատանքներն անհրաժեշտ են հմտությունների և ունակությունների ձևավորման և դրանց ամրապնդման համար: Սրանք ձևավորում են հիմք՝ աշակերտի իրական ինքնուրույն գործունեության համար:

Վերակառուցողական ինքնուրույն աշխատանքներն օգնում են վերլուծել իրադարձությունները, երևույթները, փաստերը, ձևավորում են ճանաչողական գործունեության մեթոդներն ու հնարները, նպաստում են գիտելիք ձեռք բերելու հանդեպ ներքին դրդապատճառների զարգացմանը, պայմաններ ստեղծում սովորողի մտածողական ակտիվությունը զարգացնելու համար: Այս տիպի ինքնուրույն աշխատանքները հիմք են ստեղծում աշակերտի հետագա ստեղծագործ գործունեության համար:

Տարբերակվող-փոփոխական ինքնուրույն աշխատանքները ձևավորում են հայտնի պատկերի սահմաններից դուրս պատասխան որոնելու ունակություն և հմտություն: Նոր որոշումների մշտական փնտրտուքը, ստացած գիտելիքների ընդհանրացումն ու համակարգումը, դրանց տեղափոխումը բացարձակապես ոչ ստանդարտ իրավիճակները աշակերտի գիտելիքները դարձնում են ավելի ճկուն, ձևավորում ստեղծագործ անհատ:

Ստեղծագործ ինքնուրույն աշխատանքները սովորողի ինքնուրույն գործունեության համակարգի պսակն են հանդիսանում: Սրանք ամրացնում են գիտելիքի ինքնուրույն որոնման հմտությունը և ստեղծագործ անհատ ձևավորելու ամենաազդեցիկ ձևերից մեկն են:

Այսպիսով, բազմատեսակ ինքնուրույն աշխատանքների կիրառումը գործնականում նպաստում է սովորողի ինքնուրույն աշխատելու ընդունակության կատարելագործմանը: Սակայն կամայական աշխատանքը պետք է սկսվի սովորողի կողմից գործողությունների նպատակի և գործողությունների միջոցների հստակ գիտակցմամբ:

20-րդ դարի 80-ական թթ. տեսաբանները նույնպես դասակարգման հիմք են ընդունում ինքնուրույն աշխատանքն իբրև սովորողների ստեղծագործական փորձի զարգացման կարևոր բաղկացուցիչ:

Օրինակ՝ Յ.Բ.Զոտովը առաջ է քաշում դասակարգման տարբերակ՝ բնույթով շատ նման Պիդկասիստու դասակարգմանը: Նա առանձնացնում է չորս խումբ:

<u>Ըստ օրինակի վերարտադրողական ինքնուրույն աշխատանքներն</u> անհրաժեշտ են կոնկրետ իրավիճակներում գործողությունների միջոցները հիշելու, հմտությունների ձևավորման և դրանց ամրապնդման համար: Այսպիսի աշխատանքների կատարելիս սովորողների գործունեությունը ամբողջովին ինքնուրույն չէ, քանի որ այդ ինքնուրույությունը սահմանափակվում է հասարակ վերարտադրությամբ, օրինակից ելնելով՝ գործողությունների կրկնությամբ:Սակայն նման աշխատանքների դերը շատ մեծ է: Այն համապատասխան հիմք է ձևավորում ինքնուրույն գործունեության անցնելու համար: Ընդ որում ուսուցիչը յուրաքանչյուր սովորողի համար որոշում է աշխատանքի օպտիմալ ծավալ:

<u>Վերակառուցողական-փոփոխական ինքնուրույն աշխատանքները</u> հնարավորություն են տալիս նախապես ստացած գիտելիքների և ուսուցչի կողմից տրված ընդհանուր գաղափարի հիման վրա ինքնուրույն գտնել խնդրի լուծման կոնկրետ միջոցներ: Նման աշխատանքները հնարավորություն են տալիս սովորողներին վերլուծել իրադարձությունները, երևույթները, փաստերը, խթանում են ուսումնասիրելու ներքին մղումները, պայմաններ են ստեղծում նրանց հետագա ստեղծագործական գործունեության համար:

Էվրիստիկ (հայտնագործողական) ինքնուրույն աշխատանքները ձևավորում են հմտություն և կարողություն՝ պատասխան որոնել հայտնի օինակի սահմաններից դուրս: Իբրև կանոն աշակերտն ինքն է որոշում խնդրի լուծման ուղիները, քանզի դրա համար անհրաժեշտ գիտելիքներ ունի, սակայն ընտրել դրանք հիշողության մեջ երբեմն հեշտ չի լինում: Ունեցած գիտելիքի ընդհանրացումը, նրանց տեղափոխումը նոր իրավիճակ, վարժություններն այս ուղղությամբ ապահովում են ինքնուրույն սովորելու ունակության աշակերտի ձեռք բերումը:

Ստեղծագործական ինքնուրույն աշխատանքները հնարավորություն են տալիս ստանալ սկզբունքորեն նոր գիտելիքներ, ամրապնդում են սովորողի կողմից ինքնուրույնաբար դրանք ձեռք բերելու հմտությունները:

Այսպիսով, առավել կատարյալ դասակարգումները, ինչպես արդեն նշվել է, հիմնվում են արտաքին նշանների վրա, մինչդեռ ինքնուրույն աշխատանքների դասակարգումը հիմնվում է սովորողների գործունեության ներքին բովանդակությունից, որն առայժմ հաջողությամբ չի ավարտվել:

Առավել խոստումնալից են թվում առաջադրանքների դասակարգման ճանապարհով ինքնուրույն աշխատանքի ներքին էությունը բացահայտելու փորձերը (Ի.Յա.Լերներ, Պ.Ի.Պիդկասիստի, Ի.Է.Ունտ և այլք): Սակայն դրանք էլ լուրջ մշակման կարիք ունեն:

Ինքնուրույն աշխատանքների նշանակությունը կրտսեր դպրոցականների ուսուցման գործում

Առանց դպրոցականների ինքնուրույն աշխատանքների համակարգված կազմակերպման անհնար է հասնել նրանց կողմից օրինաչափությունների խոր և ամուր յուրացման, անհնար է դաստիարակել նորը ճանաչելու ունակություն և ցանկություն, ինչն անհրաժեշտ է ինքնակրթության և ինքնակատարելագործման համար:

Գիտելիքների ինքնուրույն ձեռք բերումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ մարդը գիտի, թե ինչպես դա անել և տիրապետում է այդ միջոցներին:

Ինքնուրույն աշխատանքները մեծ նշանակություն ունեն նաև կրկնությունների և գիտելիքների ու կարողությունների ստուգման ժամանակ:

Ի.Բ.Իստոմինը գրում է այն մասին, որ ինքնուրույնության հանդեպ ստեղծագործ մոտեցման զարգացումը հենց կյանքի պահանջ է, որն էլ սահմանում է այն ուղղությունը, որով անհրաժեշտ է կատարելագործել ուսումնադասիարակչական գործընթացը:

Գիտելիքների ձեռքբերման գործունեության ինքնուրույնության ձևավորումը դպրոցականների մոտ հնարավոր է միայն այն դեպքում, երբ աշակերտը կսովորի հաղթահարել գիտելիքի ձեռք բերման գործընթացի դժվարությունները, հատկապես դրանց կիրառման փուլում: Կամային գործընթացները օրգանապես կապված են գործունեության հետ, իբրև ելակետային դրդիչներ դեպի գործողություն: Հետևաբար, գիտելիքների ընկալման ինքնուրույնության շարժառիթային և բովանդակային բաղադրիչները սերտորեն կապված են կամային գործընթացների հետ:

Ինքնակրթության գործունեության կառուցվածքի մեջ մտնում են.

1. Գիտելիքներ, ունակություններ, հմտություններ
2. Կազմակերպվածություն
3. Սովորելու դրդապատճառներ
4. Գիտական աշխարհահայացք
5. Անհատի բարձր կամային որակներ:

Որոշ տեսաբաններ ինքնակրթության գործունեությունը դիտարկում են բառի ոչ միայն լայն, այլև նեղ իմաստով: Օրինակ՝ Տ.Ի.Շամովան մատնանշում է, որ ինքնակրթությամբ զբաղվելը դպրոցականի մեջ ձևավորում է նրա անհատականության այնպիսի որակ, ինչպիսին է սեփական ուժերով նպատակամղված ուսումնառորոնողական գործունեություն ծավալելու պատրաստակամությունը: Անհատի այդ որակը սահմանվում է կողմերի հետևյալ միասնությամբ.

1. Դրդող (ինքնուրույն ուսուցման դրդապատճառներ)
2. Բովանդակային (հենակետային գիտելիքներ)
3. Տեխնիկական (ինքնակրթության գործունեության մեթոդներ)

Խոսելով դասի ժամանակ դպրոցականի ինքնուրույնության հոգեբանա-մանկավարժական համակարգի էության մասին՝ հեղինակը կանգ է առնում նրա տեխնիկական կողմի վրա:

Գիտելիքներ ձեռք բերելու գործում ինքնուրույնությունն արտահայտվում է սեփական գիտելիքի վրա հենվելով, հետազոտական աշխատանք տանելու պատրաստակամությամբ:

Բայց այն չի ներառում ցուցադրական ուղիներ և մտավոր գործողությունների ռացիոնալ միջոցներ (ինքնավերահսկման ունակություն, ինքն իր հետ վիճելու կարողություն, մտքերը հիմնավորելու կարողություն):

Ուսուցչի դերը ինքնուրույն անհատ ձևավորելու գործում այժմ ընկալվում է որպես ակտիվ, նպատակամղված, հետևողական աշխատանք՝ ուղղորդված դեպի աշակերտների ստեղծագործական ինքնուրույնության զարգացմանը: Ընդ որում, ինքնուրույն աշխատանք կազմակերպելու գործում ուսուցչի ակտիվությունը պետք է բավականին բարձր լինի: Ուսուցիչը ընտրում է նպատակ, մշակում ինքնուրույն աշխատանքի ընթացքը և միջոցները, նկատի առնում տարիքային առանձնահատկություններն ու անհատական հնարավորությունները, սահմանում աշխատանքը հաջողությամբ ավարտելու անհրաժեշտ մեթոդներն ու հնարները: Ընդգծենք, որ կրտսեր դասարանների աշակերտների ինքնուրույն աշխատանքը ուսման գործընթացի անխախտելի բաղկացուցիչ մասն է, առանց որի անհնար է ապահովել դասավանդման և աշակերտի ինքնուրույն ուսուցման միասնականությունը: Բոլոր դեպքերում, երբ ուսուցիչը ձգտում է հատկապես զարգացնել կրտսեր դպրոցականի ինքնուրույնությունը, ռացիոնալ սովորելու

ունակությունը, նա նախապատվությունը տալիս է ինքնուրույն աշխատանքներին, դրանց գերակայությանը ուսուցման մյուս մեթոդների համատեքստում: Այս դեպքում աշակերտը կատարում է իր աշխատանքն առանց մանկավարժի անմիջական ղեկավարությամբ. չնայած օգտվում է նրա ցուցումներից, բայց ցուցաբերում է նախաձեռնություն և ինքնուրույնություն:

Կրտսեր դպրոցականների ինքնուրույն գործունեության բոլոր տեսակները կարևոր նշանակություն ունեն:

Դժվար, գրեթե անհնար է գերագնահատել աշակերտի աշխատանքը գրքով:

Գրավոր վարժությունների կատարումը՝ շարադրություններ, պատմվածքներ, բանաստեղծություններ և այլն գրելը դա ինքնուրույն ստեղծագործ աշխատանք է, որը պահանջում է ավելի շատ ակտիվություն և աշխատասիրություն:

Որպես կանոն՝ կրտսեր դպրոցականների ուսումնառության գործընթացում, ինքնուրույն աշխատանքը պետք է սովորեցնի երեխաներին ինքնուրույնաբար մտածել, գիտելիք ձեռք բերել, հետաքրքրասիրություն արթնացնի դեպի դպրոցը:

Վերոնշյալից պարզ է դառնում, որ ինքնուրույն աշխատանքը հսկայական դերակատարում ունի ուսումնառության ողջ գործընթացում:

Սակայն դեռևս չկա ինքնուրույն աշխատանք հասկացության միանշանակ սահմանում: Շատերի կողմից այն ընկալվում է, որպես աշակերտի գործունեություն՝ առանց ուսուցչի անմիջական օգնությամբ: Էությունը նրանումն է, որ աշակերտն ինքը կարդում է, ինքը լսում ու ինքն էլ պատասխանում, որը պարբերաբար կրկնվում է: Գլխավորը աշակերտի ինքնուրույնությունն ու ինքնագործունեությունն է:

Ոմանք էլ կարծում են, որ աշակերտի ինքնուրույն աշխատանքը պետք է դիտարկվի որպես մտավոր լարվածություն պահանջող գործունեություն: Այս տեսակետն ու մոտեցումը ավելի ժամանակակից է և հեռանկարային, չնայած հիմքում ընկած է աշակերտի ինքնուրույությունը: Սակայն սկզբունքային տարբերությունն այն է, որ նկատի է առնվում աշակերտի ինքնակրթական գործունեության բնույթը, նրա լարվածությունը: Նկատվում է տարբերակում նաև ինքնուրույն աշխատանքների և նրանց կազմակերպման պայմանների դասակարգման նշանների սահմանման մեջ:

Տեսաբաններն ու ուսումնական գործընթաց կատարողները համակարծիք են ինքնուրույն աշխատանքի հատկանշական բաղադրիչների թվարկման հարցում: Դրանք են.

- ուսուցչի կողմից տրված հանձնարարության առկայություն,
- հանձնարարությունը կատարելու համար անհրաժեշտ ժամանակի առկայություն,
- արդյունքի առկայություն՝ բանավոր պատասխանների, գրավոր և գծագրական աշխատանքների տեսքով,
- մտավոր լարվածության անհրաժեշտություն,
- գիտելիքների ձեռքբերման և դրանք ստեղծագործաբար կիրառելու՝ աշակերտից պահանջվող գործընթացի համար անհրաժեշտ պայմանների առկայություն:

Եզրակացություն

Սովորողների ինքնուրույն աշխատանքի հարցը բարձրացվել է դեռևս անցյալի մանկավարժական գրականության մեջ: Բայց հատկապես այն կարևորվում է այժմյան իրականության մեջ: Եվ այդ բնական է. հաջող ուսուցման պայմաններից մեկը սովորողներին ինքնուրույն աշխատելու հմտությունների պատվաստումն է:

Երեխաների միտքը և երևակայությունն անսահման են, հորինած պատմությունները՝ հետաքրքիր ու անսովոր: Կարևոր է, որ երեխան կարողանա սեփական միտքը ձևակերպել՝ գտնել համապատասխան բառեր, արտահայտություններ, ապա գրանցել, իսկ հետո՝ ներկայացնել: Երեխաները պակաս հետաքրքրությամբ չեն լսում իրենց հասակակիցների հորինած պատմություններն ու հեքիաթները: Երեխաներին հասակակիցների ստեղծագործություններն ավելի են հետաքրքրում ու զարմացնում, ծիծաղեցնում ու ոգևորում: Հորինած պատմությունը գրելուց հետո երեխան այն ներկայացնում է՝ կարդում, նկարում: Մյուս երեխաները հետաքրքրությամբ լսում են, հարցեր տալիս հենց հեղինակին, համոզում ավարտը փոխել, նոր հերոս ներմուծել և այլն:

Կրտսեր դպրոցականների ինքնուրույնության զարգացումը արդյունավետ կլինի՝ պայմանավորված հետևյալ գործոններով.

- կրթական գործընթացում ինքնուրույն ստեղծագործական մեթոդների և հնարների պարբերաբար կիրառումը,
- կրտսեր դպրոցականների տարիքային և հոգեբանական յուրահատկությունների նկատառումը,
- հոգեբանա-մանկավարժական հարմարավետ պայմանների ստեղծումը՝ ներդաշնակ-զարգացած աճող անհատականության կայացման համար:

Աշխատանքն ավարտելով՝ անենք ամփոփիչ եզրահանգումներ.

1. Երեխային գործունեության մեջ ներգրավելու ինքնուրույն ստեղծագործական մեթոդը ենթադրում է անհատական մոտեցում, երբ մանկավարժը կողմնորոշված է անհատական մոտեցմամբ ընդհանրապես:

2. Ինքնուրույն ստեղծագործական աշխատանքները հոգեբանորեն կարևոր դեր են կատարում սովորողների ներդաշնակ զարգացման համար: Ինքնուրույն ստեղծագործական աշխատանքներն իբրև դաստիարակության խնդիր՝ ծնողներից պահանջում է մշտական

ամենօրյա մտորումներ, իսկ մանկավարժներից՝ տեղծագործական միտք և երևակայություն:

3. Երեխայի դաստիարակությունը մեծ պատասխանատվություն է, մեծ աշխատանք և հսկայական ստեղծագործ հրճվանք, որը պայմանավորում է մեր՝ մեծերիս, ծնողների և մանկավարժների, օգտակար լինելու գիտակցությունը:

4. Ժամանակակից դպրոցի կողմնորոշումը դեպի կրթական գործընթացի հումանիզացիա և երեխայի անհատականության բազմակողմանի զարգացում ենթադրում է ուսման գործընթացի (որի շրջանակներում ձևավորվում են հիմնարար գիտելիքները, կարողություններն ու հմտությունները) և ստեղծագործական գործունեության (երեխայի անհատականության, ճանաչողական ակտիվության, ոչ ստանդարտ խնդիրներ լուծելու ընդունակության զարգացման) ներդաշնակ միասնություն:

Ավանդական դասընթացային գործունեության մեջ զանազան զարգացնող պարապմունքների ակտիվ ներմուծումը շատ արդիական է և մանկավարժական կոլեկտիվի կարևորագույն խնդիրներից մեկը:

5. Ուսման գործընթացում ինքնուրույն աշխատանքը հանդես է գալիս որպես ուսումնառության առավել ունիվերսալ տեսակ՝ սուբյեկտիվ-հոգեբանական առումով: Այս համատեքստում ինքնուրույնությունը համարժեք է հոգեկան գործունեությանը բոլոր հարթություններում. նրա ամենապարզունակ ձևից՝ ըստ օրինակի աշխատանք կատարելու համար անհրաժեշտ հնարքների իմացությունից մինչև ստեղծագործական բարձրագույն ձևեր:

6. Այս դրույթը բացառիկ կարևոր նշանակություն ունի օպտիմալ ուսուցում կազմակերպելու գործում:

Հայտնի է, որ ուսուցումն ընդհանուր տեսքով երկկողմանի գործընթաց է: Նրա մի կողմը ձևավորում է աշակերտի կողմից գիտելիքների և ունակությունների ինքնուրույն յուրացումը, իսկ մյուս կողմը՝ այդ յուրացման կազմակերպումը:

Այդ պատճառով էլ ուսուցման արդյունավետությունը պայմանավորված է ինչպես աշակերտի ճանաչողական գործունեությամբ, հետաքրքրվածության աստիճանով, այնպես էլ ուսուցման կազմակերպման որակով:

Օգտագործված գրականություն

1. Գյուլամիրյան Ջ. «Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա», Երևան 2009թ.
2. Մուսայելյան Ս. Կրտսեր դպրոցականների հետազոտական գործունեությունը՝ որպես ինքնուրույնության և անհատականության զարգացման ճանապարհ «Նախաշավիղ» N3, 2014, էջ-8
3. Չիբուխչյան Կ. Կրտսեր դպրոցականների հետազոտական կարողությունների ձևավորման մեթոդները «Նախաշավիղ» N3, 2012, էջ-3
4. Չիբուխչյան Կ. Մայրենիի դասերին սովորողների ստեղծագործական ունակությունների ձևավորումն ու զարգացումը՝ որպես արդյունավետ ուսուցման պայման «Նախաշավիղ» N3, 2013, էջ-9
5. Մնացականյան Է., «Գրականագիտական ուղեցույց բառարան» Երևան 2013
6. Տեր-Գրիգորյան Աշոտ «Հայոց լեզվի մեթոդիկա », Ե.:Լույս, 1980-564 էջ
7. Исаев Л.Н. О видах заданий к самостоятельной работе с книгой// Сов. Педагоника,1939, №3.
8. Истомина Н.Б. Активизация учащихся на уроках математики в начальных классах. – М.,1985.
9. Ковальская М.К. Организация самостоятельной работы учащихся в процессе обучения. – М.,1977.
10. http://bibliofond.ru/
11. http://nsportal.ru/shkola
12. http://mskh.am/
13. http://dpir.mskh.am/